ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“28” նոյեմբերի 2024թ. N 2876-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 26 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 26 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

11/27/2024

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2024 թվականի նոյեմբերի 28-ի
N2876-Ա հրամանի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26

**Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի**

26.11.2024թ. ք. Երևան

2024թ. նոյեմբերի 26-ին ժամը 15:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

քարտուղար՝ Խ. Սողոմոնյանը

անդամներ՝ Ա. Խաչատրյանը

Տ. Գասպարյանը

Կ. Մկրտչյանը

***<u>Օրակարգում՝</u>***

1. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար 2024թ. նոյեմբերի 26-ի գնահատման համար դիմում ներկայացրած «Երկու ընկեր» ՍՊ ընկերության կողմից Մրցութային հանձնաժողովի 2024թ. նոյեմբերի 25-ի թիվ 25 Արձանագրությամբ նշված թերությունների վերացման հարցը,

2. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու հարցը:

***<u>Քննարկվեց՝</u>***

1. «Երկու ընկեր» ՍՊ ընկերության կողմից Մրցութային հանձնաժողովի 2024թ. նոյեմբերի 25-ի թիվ 25 Արձանագրությամբ նշված թերությունների վերացման հարցը,

2. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր տրամադրելու համար 2024թ. նոյեմբերի 26-ի գնահատմանը «Երկու ընկեր» ՍՊ ընկերության կողմից դիմումով ներկայացված ավտոբուսների գնահատման հարցը,

3. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու հարցը:

***<u>Արձանագրվեց՝</u>***

1. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջի՝ Հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանի հանձնարարությամբ Հանձնաժողովի նախագահի պարտականություն-ները կկատարի հանձնաժողովի անդամ Ա. Խաչատրյանը:

2. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար «Երկու ընկեր» ՍՊ ընկերության կողմից Մրցութային հանձնաժողովի 2024թ. նոյեմբերի 25-ի թիվ 25 Արձանագրությամբ նշված թերությունները վերացվել են:

3. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար «Երկու ընկեր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ավտոբուսները համապատասխանում են ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994-Ն որոշման 3-րդ կետի պահանջներին:

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի պահանջներով՝

***<u>Որոշվեց՝</u>***

1. «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին սպասարկելու իրավունքը **ժամանակավոր** հատկացնել «Երկու ընկեր» ՍՊ ընկերությանը **մինչև Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցի սպասարկման համար մրցույթում հաղթող կազմակերպության հետ սպասարկման պայմանագրի կնքումը**, 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխադրավարձով և հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

| Ավտոբուսի | | | |
|---|---|---|---|
| NN | մակնիշ | հաշվառման | նույնականացման |

| ը/կ | | համարանիշ | համար |
|---|---|---|---|
| 1. | MERCEDES-BENZ Sprinter 311 CDI | 553 DD 55 | XDN9096321B120727 |
| 2. | MERCEDES-BENZ Sprinter 516 CDI | 553 VV 55 | WD3BF1DD2HP390137 |
| 3. | GAZ LUIDOR 225000 | 37 BF 081 | Z7C225000D0003020 |
| 4. | GAZ 32213 | 35 QR 236 | X96322100C0721368 |
| 5. | GAZ 322132 | 35 VG 811 | X96322132B0700941 |
| 6. | GAZ 32212 | 37 EV 378 | X96322120H0826442 |
| 7. | GAZ LUIDOR 225000 | 37 GH 162 | X96322133C0728100 |
| 8. | GAZ 32213 | 37 MV 416 | X96322100C0721490 |
| 9. | GAZ 322133-7408 | 37 OA 936 | X96270500B0689505 |
| 10. | GAZ 32213 | 37 QT 451 | X96322130B0707907 |
| 11. | FORD IMYA-M 3006 | 37 UD 865 | X89300658B0AC4182 |
| 12. | GAZ 322132 | 37 XR 020 | X96322100B0698667 |
| 13. | GAZ 32213 | 53 QO 003 | X96322130D0749754 |
| 14. | FORD TRANSIT 222708 | 96 AP 969 | XUS222708B0000454 |
| 15. | GAZ 32212 | 264 AN 61 | X96322120A0674023 |
| 16. | GAZ 322132 | 37 NQ 930 | X96322133C0727644 |
| 17. | GAZ 322133 | 613 AS 61 | Z7C225000G0001423 |
| 18. | GAZ LUIDOR 225000 | 616 AS 61 | Z7C225000C0002687 |
| 19. | GAZ 32213 | 500 OQ 01 | X96322130C0725840 |
| | Ընդհանուր՝ 19 ավտոբուս, որից՝ 16 հիմնական և 3 պահուստային | | |

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

քարտուղար՝ Խ. Սողոմոնյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Կ. Մկրտչյան